

տրոհեալ մանրամասն տրամադրութիւններով մը, որ կը ցուցադրեն անդրաշիրմեան նախահոգ նրբամտութիւն:

Կեսարացիներուն ետեւէն կուգան նաև կարգ մը միւս գաւառացի վաճառականները, որ հետզհետէ զետեղուեցան Կ. Պոլիսի հրապարակին վրայ և որոց մասին պիտի գրենք հանգրուան մը ետքը:

Այսպէս՝ 1850-60ին հաստատեալ առեւտրական տուներն՝ հասած էին 1870ին բանուկ և զարգուն վիճակի մը, և քիչ չատ կանոնաւորեալ հաշուեկալութեամբ ու մատակարարութեամբ կը յառաջդիմէին իրենց տնօրէններով, տոմարակալներով, գործակալներով՝ անցունելով տակաւ օտարազգիներէն հայերո՛ւն Կ. Պոլիսի մանիֆաթութեայի գործերը:

Ասոնց գլխաւորներն են՝ Յակոբեան եղբարք, որ հաստատեալ կռուանի մը վրայ՝ մէկ կողմէն Կ. Պոլիսի բիացային մէջ միւս կողմէն պարսիկ վաճառականներու հետ կը կատարէին նշանակելի տուրեաւներ: Իրենց Մանչէսթըրի տան վարիչն էր Յովհաննէս Յակոբեան բալեւսէր անձնաւորութիւնը, որ շատոնց տուն տեղ եղած էր յԱնգղիա: Գարակէօզեանք, որ կը վայելէին մեծ անուն թէ՛ պարսիկ թէ՛ թուրք հրապարակներու վրայ՝ իրրեւ սեղանաւոր և իրրեւ վաճառական: Կիւմիւշկէրտան եղբարք, որ ինքօգնութեամբ յառաջ եկան ու փայլեցան 1865էն առդին, մանաւանդ ամէրիգանի ու ճերմակեղէնի գործերու մէջ: Ֆնտըքլեան եղբարք՝ Յարութիւն, Գէորգ, Պետրոս և պապ Սարգիս, որ տօքումայի, պասմայի, ներկեալներու և ամէրիգանի վրայ հաստատած էին ճիւղաւոր գործեր ի Կ. Պոլիս, և սկսած էին իրենք ևս պարսիկ առեւտուրներու և Թէրսհանէի ու Թօփհանէյի հետ մեծ գործառնութեանց. իրենց այս վերջին ճիւղերուն գլխաւոր վարիչն էր Պետրոս Ֆնտըքլեան, որ՝ կրթուած